ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1

№ ԲՄԱՊՁԲ-7/10-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 29-ը մայիսի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Էլիտ Կապիտալ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 12.04.2018թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-7/10-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 551 868 417 (հինգ հարյուր հիսունմեկ միլիոն ութ հարյուր վաթսունութ հազար չորս հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետին համապատասխան, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ (Հավելված N 2):

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը վաճառողի կողմից ապրանքի մատակարարման դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 2 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Երևան, Միրաքյան 23 շին. 8
աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱրմՍվիսԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2500010213370100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01246073
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Գնման առարկան	Չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Ընդհանուր գումարը	Ապրանքի մատակարարումը 2018թ. ըստ ամիսների						
						Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր
1	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո ոլորով խյուս մսով)	կգ	1 396	82 634	115 357 064	11800	11800	11800	11800	11800	11800	11834
2	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո ցորենաձավարով շիլա խոզի մսով)	կգ	1 386	82 634	114 530 724	11800	11800	11800	11800	11800	11800	11834
3	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո բրնձով շիլա հավի մսով)	կգ	1 396	82 634	115 357 064	11800	11800	11800	11800	11800	11800	11834
4	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո հաճարաձավարով շիլա խոզի մսով)	կգ	1 386	82 639	114 537 654	11800	11800	11800	11800	11800	11800	11839
5	Պահածոյացված արտադրանք (Պահածո՝ բուսական, ոսպով)	կգ	997	92 363	92 085 911	13000	13000	13000	13000	13000	13000	14363
Ընդհանուր գումարը՝ 551 868 417 (հինգ հարյուր հիսունմեկ միլիոն ութ հարյուր վաթսունութ հազար չորս հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ												

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ ք.Երևան, Սարմի 103 հասցեում:

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 90001144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ
ք. Երևան, Միրաքյան 23 շին. 8
«ԱրմՍվիսԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010213370100
ՀՎՀՀ 01246607
տնօրեն

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 2

Վճարման ժամանակացույց

Հ/հ	Ապրանքի ֆինանսավորման անվանատողի անվանումը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ								
		CPV-ի կոդը	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո ոլոռով խյուս մսով)	15131632/320/9/3	16472800	32945600	49418400	65891200	82364000	98836800	115357064	115357064
2	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո ցորենաձավարով շիլա խոզի մսով)	15131632/321/9/3	16354800	32709600	49064400	65419200	81774000	98128800	114530724	114530724
3	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո բրնձով շիլա հավի մսով)	15131632/323/9/3	16472800	32945600	49418400	65891200	82364000	98836800	115357064	115357064
4	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո հաճարաձավարով շիլա խոզի մսով)	15131632/325/9/3	16354800	32709600	49064400	65419200	81774000	98128800	114537654	114537654
5	Պահածոյացված արտադրանք (Պահածո՝ բուսական, ոսպով)	15331187/305/9/3	12961000	25922000	38883000	51844000	64805000	77766000	92085911	92085911

- *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարության
ԼՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 23 շին. 8
«ԱրմՍվիսԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010213370100
ՀՎՀՀ 01246073

տնօրեն

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՄԱՊՁԲ-7/10-2

ք. Երևան 12-ը ապրիլի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Էլիտ Կապիտալ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար/հավելված N 2/:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են՝ 40 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի:

2.1.8 Ընտել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1 870 221 894 (մեկ միլիարդ ութ հարյուր յոթանասուն միլիոն երկու հարյուր քսանմեկ հազար ութ հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում

վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարումը նախատեսվում է իրականացնել 2018-2020թթ. համաձայնագրերի կնքման միջոցով:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ

գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Երևան, Միրաքյան 23 շին. 8
աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱրմՍվիսԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2500010213370100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01246073
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Լ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 1
N ԲՄԱՊՁԲ–7/10-2 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. **Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո ոլորով խյուս մսով) (կգ)** - Մսաբուսական պահածո դեղին ոլորով խյուս՝ մսով, սոխով, գազարով (սուսերաձև կտրատված) և տոմատով, տեխնիկական պայմանների համաձայն, պատրաստված թարմ կամ 1 անգամից ոչ ավել սառեցված, ճարպի և շարակցական հյուսվածքների 14%-ից ոչ ավել պարունակության, մանր կտրատված (արգելվում է աղացած մսի օգտագործումը), առանց խոշոր արյունատար անոթների և լիմֆատիկ հանգույցների տավարի մսից, արևածաղկի կամ եգիպտացորենի ռաֆինացված ձեթով: 525գր-ում չոր նյութերը ոչ պակաս 37%, ընդհանուր սպիտակուցները 12%-ից ոչ պակաս, որից կենդանական սպիտակուցների պարունակությունը 7%-ից ոչ պակաս, մսի քանակը եփված վիճակում ոչ պակաս 100 գրամ, պատրաստի մսի կտորների քաշը ոչ պակաս 10 գրամից (թույլատրվում է 10 գրամից պակաս մսի կտորները ընդհանուր մսի քանակի 15%-ից ոչ ավել), մսի ամբողջ քանակությունը տեղադրված լինի կափարիչի տակ, յուղի զանգվածային մասը 5%-ից 8%, քլորիդների զանգվածային մասը 1,2-ից 1,5%: Արգելվում է սննդային հավելման օգտագործումը: 525գր. նետտո քաշով մետաղյա տուփերով՝ ստվարաթղթե արկղերում: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 24 ամիս: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80%: Յուրաքանչյուր մետաղյա տուփի կափարիչի վրա արտադրման ժամկետը (օր, ամիս, տարի) և ՊՆ գրառումը մակնանշված լինի ռելեֆային դաջվածքով: Տուփերի պիտակների ֆոնը՝ դաշտային համազգեսի երանգով դեղին գույնի: Պիտակը՝ լիտոգրաֆիա, վրան պետք է լինի <<Օգտագործելուց առաջ տաքացնել>>, բաղադրությունը՝ միս, ծավարեղեն, յուղ (նշելով ծավարեղենի և յուղի տեսակը), աղ, սոխ, գազար, տոմատ, պղպեղ, նաև նշելով ցուցանիշներ սննդային և էներգետիկ արժեքի վերաբերյալ (ճարպ, սպիտակուց, ածխաջուր, կալորիականություն) և ճաշատեսակի պատկերը: Յուրաքանչյուր արկղի մեջ 1 բացիչ: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011, 034/2013 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

   Ապրանքային նշան՝ QUICK
   Արտադրողի անվանումը՝ <<Էլիտ Կապիտալ>> ՍՊԸ
   Ծագման երկիրը՝ ՀՀ

2. **Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո ցորենաձավարով շիլա խոզի մսով) (կգ)** - Մսաբուսական պահածո ցորենաձավարով շիլա հատիկավոր՝ 2-րդ կարգի խոզի մսով, սոխով, գազարով (սուսերաձև կտրատված) և տոմատով, տեխնիկական պայմանների համաձայն, պատրաստված թարմ կամ 1 անգամից ոչ ավել սառեցված խոզի մանր կտրատված մսից (արգելվում է աղացած մսի օգտագործումը), արևածաղկի կամ եգիպտացորենի ռաֆինացված ձեթով: 525գր-ում չոր նյութերը ոչ պակաս 39%, ընդհանուր սպիտակուցները 6%-ից ոչ պակաս, որից կենդանական սպիտակուցների պարունակությունը 4,5%-ից ոչ պակաս, մսի քանակը եփված վիճակում ոչ պակաս 100 գրամ, պատրաստի մսի կտորների քաշը ոչ պակաս 10 գրամից (թույլատրվում է 10 գրամից պակաս մսի կտորները ընդհանուր մսի քանակի 15%-ից ոչ ավել), մսի ամբողջ քանակությունը տեղադրված լինի կափարիչի տակ, յուղի զանգվածային մասը 10%-ից 12%, քլորիդների զանգվածային մասը 1,2-ից 1,5%: Արգելվում է սննդային հավելման օգտագործումը: 525գր. նետտո քաշով մետաղյա տուփերով՝ ստվարաթղթե արկղերում: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 24 ամիս: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80%: Յուրաքանչյուր մետաղյա տուփի կափարիչի վրա արտադրման ժամկետը (օր, ամիս, տարի) և ՊՆ գրառումը մակնանշված լինի ռելեֆային դաջվածքով: Տուփերի պիտակների ֆոնը՝ դաշտային համազգեսի երանգով մանուշակագույն: Պիտակը՝ լիտոգրաֆիա, վրան պետք է լինի <<Օգտագործելուց առաջ տաքացնել>>, բաղադրությունը՝ միս, ծավարեղեն, յուղ (նշելով ծավարեղենի և յուղի տեսակը), աղ, սոխ, գազար, տոմատ, պղպեղ, նաև նշելով ցուցանիշներ սննդային և էներգետիկ արժեքի վերաբերյալ (ճարպ, սպիտակուց, ածխաջուր, կալորիականություն) և ճաշատեսակի պատկերը: Յուրաքանչյուր արկղի մեջ 1 բացիչ: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011, 034/2013 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

   Ապրանքային նշան՝ QUICK
   Արտադրողի անվանումը՝ <<Էլիտ Կապիտալ>> ՍՊԸ
   Ծագման երկիրը՝ ՀՀ

3. **Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո բրնձով շիլա հավի մսով) (կգ)** – Մսաբուսական պահածո բրնձով շիլա հատիկավոր՝ բարձր կամ 1-ին տեսակի հավի մսով, սոխով, գազարով (սուսերաձև կտրատված), տեխնիկական պայմանների համաձայն, պատրաստված թարմ կամ 1 անգամից ոչ ավել սառեցված հավի մանր կտրատված մսից (արգելվում է աղացած մսի օգտագործումը), արևածաղկի կամ եգիպտացորենի ռաֆինացված ձեթով: 525գր-ում չոր նյութերը ոչ պակաս 37%, ընդհանուր սպիտակուցները 8%-ից ոչ պակաս, որից կենդանական սպիտակուցների պարունակությունը 6%-ից ոչ պակաս, մսի քանակը եփված վիճակում ոչ պակաս 100 գրամ, պատրաստի մսի կտորների քաշը ոչ պակաս 10 գրամից (թույլատրվում է 10 գրամից պակաս մսի կտորները ընդհանուր մսի քանակի 15%-ից ոչ ավել), մսի ամբողջ քանակությունը տեղադրված լինի կափարիչի տակ, յուղի

զանգվածային մասը 11%-ից 13%, քլորիդների զանգվածային մասը 1,2-ից 1,5%: Արգելվում է սննդային հավելման օգտագործումը: 525գր. նետտո քաշով մետաղյա տուփերով՝ ստվարաթղթե արկղերում: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 24 ամիս: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80%: Յուրաքանչյուր մետաղյա տուփի կափարիչի վրա արտադրման ժամկետը (օր, ամիս, տարի) և ՊՆ գրառումը մակնանշված լինի ռելեֆային դաջվածքով: Տուփերի պիտակների ֆոնը՝ դաշտային համազգեսի երանգով մուգ կանաչ գույնի: Պիտակը՝ լիտոգրաֆիա, վրան պետք է լինի <<Օգտագործելուց առաջ տաքացնել>>, բաղադրությունը՝ միս, ձավարեղեն, յուղ (նշելով ձավարեղենի և յուղի տեսակը), աղ, սոխ, գազար, պղպեղ, նաև նշելով ցուցանիշներ սննդային և էներգետիկ արժեքի վերաբերյալ (ճարպ, սպիտակուց, ածխաջուր, կալորիականություն) և ճաշատեսակի պատկերը: Յուրաքանչյուր արկղի մեջ 1 բացիչ: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011, 034/2013 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Ապրանքային նշան՝ QUICK
Արտադրողի անվանումը՝ <<Էլիտ Կապիտալ>> ՍՊԸ
Ծագման երկիրը՝ ՀՀ

4. **<u>Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո հաճարաձավարով շիլա խոզի մսով) (կգ)</u>** – Մսաբուսական պահածո հաճարաձավարով շիլա հատիկավոր՝ 2-րդ կարգի խոզի մսով, սոխով, գազարով (սուսերաձև կտրատված) և տոմատով, տեխնիկական պայմանների համաձայն, պատրաստված թարմ կամ 1 անգամից ոչ ավել սառեցված խոզի մանր կտրատված մսից (արգելվում է աղացած մսի օգտագործումը), արևաձաղկի կամ եգիպտացորենի ռաֆինացված ձեթով: 525գր-ում չոր նյութերը ոչ պակաս 39%, ընդհանուր սպիտակուցները 6%-ից ոչ պակաս, որից կենդանական սպիտակուցների պարունակությունը 4,5%-ից ոչ պակաս, մսի քանակը եփված վիճակում ոչ պակաս 100 գրամ, պատրաստի մսի կտորների քաշը ոչ պակաս 10 գրամից (թույլատրվում է 10 գրամից պակաս մսի կտորները ընդհանուր մսի քանակի 15%-ից ոչ ավել), մսի ամբողջ քանակությունը տեղադրված լինի կափարիչի տակ, յուղի զանգվածային մասը 10%-ից 12%, քլորիդների զանգվածային մասը 1,2-ից 1,5%: Արգելվում է սննդային հավելման օգտագործումը: 525գր. նետտո քաշով մետաղյա տուփերով՝ ստվարաթղթե արկղերում: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 24 ամիս: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80%: Յուրաքանչյուր մետաղյա տուփի կափարիչի վրա արտադրման ժամկետը (օր, ամիս, տարի) և ՊՆ գրառումը մակնանշված լինի ռելեֆային դաջվածքով: Տուփերի պիտակների ֆոնը՝ դաշտային համազգեսի երանգով մանուշակագույն: Պիտակը՝ լիտոգրաֆիա, վրան պետք է լինի <<Օգտագործելուց առաջ տաքացնել>>, բաղադրությունը՝ միս, ձավարեղեն, յուղ (նշելով ձավարեղենի և յուղի տեսակը), աղ, սոխ, գազար, տոմատ, պղպեղ, նաև նշելով ցուցանիշներ սննդային և էներգետիկ արժեքի վերաբերյալ (ճարպ, սպիտակուց, ածխաջուր, կալորիականություն) և ճաշատեսակի պատկերը: Յուրաքանչյուր արկղի մեջ 1 բացիչ: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011, 034/2013 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Ապրանքային նշան՝ QUICK
Արտադրողի անվանումը՝ <<Էլիտ Կապիտալ>> ՍՊԸ
Ծագման երկիրը՝ ՀՀ

5. **<u>Պահածոյացված արտադրանք (Պահածո՝ բուսական, ոսպով) (կգ)</u>** – Պահածո՝ բուսական, ոսպով՝ սոխով, գազարով (սուսերաձև կտրատված), տեխնիկական պայմանների համաձայն, պատրաստված արևաձաղկի կամ եգիպտացորենի ռաֆինացված ձեթով: 525գր-ում չոր նյութերը ոչ պակաս 28%, ընդհանուր սպիտակուցները 6%-ից ոչ պակաս, յուղի զանգվածային մասը 5%-ից 8%, քլորիդների զանգվածային մասը 1,2-ից 1,5%: 525գր. նետտո քաշով մետաղյա տուփերով՝ ստվարաթղթե արկղերում: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 24 ամիս: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80%: Յուրաքանչյուր մետաղյա տուփի կափարիչի վրա արտադրման ժամկետը (օր, ամիս, տարի) և ՊՆ գրառումը մակնանշված լինի ռելեֆային դաջվածքով: Տուփերի պիտակների ֆոնը՝ դաշտային համազգեսի երանգով կապույտ գույնի: Պիտակը՝ լիտոգրաֆիա, վրան պետք է լինի <<Օգտագործելուց առաջ տաքացնել>>, բաղադրությունը՝ ընդեղեն, յուղ (նշելով ընդեղենի և յուղի տեսակը), աղ, սոխ, գազար, տոմատ, պղպեղ, նաև նշելով ցուցանիշներ սննդային և էներգետիկ արժեքի վերաբերյալ (ճարպ, սպիտակուց, կալորիականություն) և ճաշատեսակի պատկերը: Յուրաքանչյուր արկղի մեջ 1 բացիչ: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Ապրանքային նշան՝ QUICK
Արտադրողի անվանումը՝ <<Էլիտ Կապիտալ>> ՍՊԸ
Ծագման երկիրը՝ ՀՀ

Ծանոթություն՝
Պահածոների փաթեթավորման տուփերի և արկղերի վրա տպագրված լինի՝
1. Արտադրող ձեռնարկության անվանումը, գտնվելու վայրը, գործունեության իրականացման լիցենզիայի համարը (եթե այդպիսին օրենքով պարտադիր պահանջ է)
2. Արտադրանքի անվանումը, տեսակը
3. Արտադրության օրը, ամիսը, տարեթիվը, պահման պայմանները, պիտանելիության ժամկետը

4. Մատակարար ձեռնարկության անվանումը
5. Օրենքով սահմանված այլ տեղեկատվություն
6. Ապրանքի քաշը՝ բրուտտո, նետտո, տուփերի և փաթեթների քանակը (մակնանշվում են արկղերի պիտակները)
7. Ապրանքի զտաքաշը (մակնանշվում են տուփերի պիտակները)
8. <<Զինվորի բաժին: Վաճառքի ենթակա չէ>> գրառումը (գրառվում են նաև տուփերի լիտոգրաֆիկ պիտակներին)
9. Արկղերի վրայի գրառումները մակնանշված լինեն տեսանելի վայրում, ներկով 7-ից 10մմ բարձրությամբ տառերով, տվյալ ապրանքատեսակին չվերաբերվող այլ գրառումներ չի թույլատրվում:
10. Ստվարաթղթե ամուր արկղերով, հնգաշերտ ծալքավոր:
11.Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:
12. Գործարանային փաթեթավորումը խախտված ապրանքատեսակները արգելվում են:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքի անվանումը	Չափի միավորը	Ընդհանուր քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Ընդհանուր գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետ
1	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո ոլորով խյուս մսով)	կգ	286 470	1 396	399 912 120	Ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում
2	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո ցորենաձավարով շիլա խոզի մսով)	կգ	286 470	1 386	397 047 420	
3	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո բրնձով շիլա հավի մսով)	կգ	286 470	1 396	399 912 120	
4	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո հաճարաձավարով շիլա խոզի մսով)	կգ	286 509	1 386	397 101 474	
5	Պահածոյացված արտադրանք (Պահածո՝ բուսական, ոսպով)	կգ	277 080	997	276 248 760	
	Ընդամենը	1 870 221 894 (մեկ միլիարդ ութ հարյուր յոթանասուն միլիոն երկու հարյուր քսանմեկ հազար ութ հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ				

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ ք.Երևան, Սարմի 103 հասցեում:

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ
ք. Երևան, Միրաքյան 23 շին. 8
«ԱրմՍվիսԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010213370100
ՀՎՀՀ 01246073

տնօրեն

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 2
N ԲՄԱՊՁԲ-7/10-2 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքի անվանումը	Չափի միավորը	Ընդհանուր քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Ընդհանուր գինը, ՀՀ դրամ	Վճարման պայմանները
1	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո ոլոռով խյուս մսով)	կգ	286 470	1 396	399 912 120	Պայմանագրի կատարման համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ կնքվելիք Համաձայնագրերով սահմանված վճարման ժամանակացույցով
2	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո ցորենաձավարով շիլա խոզի մսով)	կգ	286 470	1 386	397 047 420	
3	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո բրնձով շիլա հավի մսով)	կգ	286 470	1 396	399 912 120	
4	Մսաբուսական պահածոներ (Մսաբուսական պահածո հաճարաձավարով շիլա խոզի մսով)	կգ	286 509	1 386	397 101 474	
5	Պահածոյացված արտադրանք (Պահածո՝ բուսական, ոսպով)	կգ	277 080	997	276 248 760	

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի ղեկավար

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ
ք. Երևան, Միրաքյան 23 շին. 8
«ԱրմՍվիսԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010213370100
ՀՎՀՀ 01246073

տնօրեն

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 3
N ԲՄԱՊՁԲ-7/10-2 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԲՄԱՊՁԲ-7/10-2 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն